ԼԱՎԱԳՈՒՅՆԸ ԵՐԿՐՈՒՄ

ԷՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԸ ՆՎԱՃԵՑ «ՎՐԱՍՏԱՆԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԽՈՀԱՐԱՐ» ԿՈՉՈՒՄԸ

Եթե կինոյում՝ «Oskar», ապա խոհանոցում՝ «Bocuse d`Or»: Եթե առաջինը ամերիկյան, մյուսը՝ ֆրանսիական մրցանակներ են, այդուհանդերձ, երկուսն էլ՝ գերվարպետության համար: Մենք քիչ թե շատ ծանոթ ենք «Oskar»-ին ու նրա պատմությանը: Իսկ, թե ի՞նչ է «Bocuse d`Or», շատերս իմացանք ու իմանալու ենք էրիկ Սարգսյանի շնորհիվ, ով ճանաչվել է Վրաստանի լավագույն խոհարար եւ այդով, ճանապարհ հարթել 2021 թվականին Ֆրանսիայում «Bocuse d`Or»-ին Վրաստանը ներկայացնելու ու... ո՞վ իմանա միգուցե հաղթելու համար: Ընդ որում, Վրաստանը համաշխարհային համբավ ունեցող այս մրցույթում ներկայանում է առաջին անգամ:

23-ամյա թբիլիսցի էրիկ Սարգսյանի հետ խոսել ենք նրա հաղթանակի, խոհարարության ու «Bocuse d`Or» հեղինակավոր մրցույթի մասին:

- Էրիկ, ե՞րբ եւ ինչպե՞ս ճանաչվեցիր Վրաստանի լավագույն խոհարար:

- Երբեմն ինքս էլ զարմանում եմ, որովհետեւ մրցակիցներս բոլորն էլ ուժեղ, փորձառու ու տաղանդավոր էին, ժյուրին՝ խստապահանջ: Նրա կազմում էին Վրաստանի լավագույն ութ շեֆ-խոհարարներ, որոնց թվում՝ Լեւան Կոբիաշվիլին՝ Վրաստանում «Bocuse d`Or»-ի նախագահը: Մրցույթն անցավ նոյեմբերի 2-3-ը, մայրաքաղաքի «Expo Georgia» ցուցասրահում, Վրաստանի շրջակա միջավայրի եւ գյուղատնտեսության նախարարության ֆինանսական աջակցությամբ: Մրցանակային երեք տեղ սահմանվեց. երրորդին արժանացավ Գիորգի Արաբուլին, երկրորդը նվաճեց Գաբրիել Ծիկլաուրին, դե', իսկ առաջինը՝ ես: Ես եւ իմ թիմը ներկայացրել էինք երեք տեխնոլոգիաներով պատրաստված խոզի տենդիլին՝ սեզոնային խավարտով (գարնիր):

- Կովկասցիներս մսակեր ենք...

- Չգիտեմ՝ որքանով դա դեր խաղաց, բայց կարծում եմ, առաջնահերթությունը տրվեց համին, բաղադրիչներին, տեխնիկային:

- Ի՞նչ է քեզ համար երկիր ներկայացնելը...

- Եթե հաշվի առնենք, որ սա իմ առաջին մասնակցությունն է, որեւէ մրցույթի, ապա մե՜ծ, շա՜տ մեծ պատասխանատվություն, որովհետեւ մրցույթները սովորաբար իրենց կանոններն ունեն:

- Եվ մանավանդ այնպիսի հեղինակավորը, ինչպիսին «Bocuse d`Or»-ն է:

- Միանշանակ: Ուստի իմ հաղթանակը ոչ միայն խոհարարիս կատարելագործման նոր ուղի է բացում, այլեւ ներկայացնում ու բարձրացնում երկրիս՝ Վրաստանի խոհարարական մշակույթը, գրավելով աշխարհի լավագույնների ուշադրությունը դեպի նրա ազգային խոհանոց, որ շատ կարեւոր է երկիրը ճանաչելու եւ նրանում լինելու ցանկություն առաջացնելու տեսանկյունից:

- Աշխարհաճանաչ «Bocuse d`Or»-ն արդեն երեսուն տարիների պատմություն ունի, որքա՞ն է հայտնի Վրաստանում:

- «Bocuse d`Or»-ը անցկացվում է 1987 թվականից եւ կրում 20-րդ դարի ֆրանսիացի հայտնի խոհարարներից մեկի՝ Պոլ Բոկյուզի անունը: Ընթացիկ մրցույթի տարբեր փուլեր տարվելու են տարբեր երկրներում: Օրինակ, կիսաեզրափակիչ փուլը կանցկացվի 2020 թվականի մայիսի 28-29-ին Թալինում (Էստոնիա), որին մասնակից 24 երկրներից կընտրվեն տասը լավագույնները: Վրաստանն այս հեղինակավոր մրցույթին ներգրավվելու հնարավորություն ունեցավ այս տարի ֆրանսիական պարենամթերքի մայրաքաղաք Լիոնում, խոհարարական մրցույթին մասնակցելուց հետո:

- Հայտնի է, որ Ֆրանսիան թելադրող է ինչպես մոդայում, այնպես էլ՝ կերակրատեսակում: Եվ ընդհանրապես, Ֆրանսիայում խոհարարը համարվում է բժշկին հավասար մասնագետ, քանի որ մարդուն ամենաանհրաժեշտ պայմանն է ապահովում՝ սնունդը: Ծանո՞թ ես ֆրանսիական խոհանոցին:



էրիկը՝ տիկնոջ՝ Սալիի հետ

- Ծանոթ եմ այնքանով, որ ուսանել եմ Ֆրանսիայի CFA խոհարարական լիցեյում, ապա աշխատել Փարիզի «Auberge bressane» ֆրանսիական ռեստորանում ու շատ բան սովորել հենց գործնականում: Խոստովանեմ, որ այդ օրերից ֆրանսիական խոհանոցի սիրահար եմ: Սիրում եմ, որովհետեւ, կենցաղային լինելուց բացի, ֆրանսիացիների համար խոհարարությունը արվեստ է նաեւ, կենդանի օրգանիզմ, որն անընդհատ փոփոխվելու, բազմազան ու բազմաբնույթ, նորը դառնալու հատկություն ունի...

- Էրիկ, իսկ Թբիլիսիու՞մ «խոհանոցային քո ուղին» ե՞րբ է սկսվել:

- Տարիքս հիշում եմ, տասնհինգ տարեկան էի, բայց թե ի՞նչ եմ պատրաստել՝ ոչ: Թեեւ այդ ժամանակ մտքովս ոչ էլ անցնում էր, որ օրերից մի օր խոհարար եմ դառնալու: Շատ լուրջ զբաղվում էի ֆուտբոլով, բայց հետո ծանր վնասվածք ստացա եւ ստիպված էի հեռանալ ֆուտբոլից: Ուսանեցի Թբիլիսիի «Իկարոս» խոհարարական քոլեջում, ապա մեկնեցի Ֆրանսիա: Բայց՝ վերադարձա...

- Ինչու՞...

- Երեւի, խինկալին կանչեց:

- Սիրու՞մ ես...

- Իսկ մարդ կա՞, որ չսիրի... երբ ռեստորանում եմ՝ որպես հաճախորդ, պարտադիր պատվիրում եմ խինկալի:

- Փաստորեն ավանդապաշտ ու հավատարիմ մարդ ես: Աշխատել ես Թբիլիսիի լավագույն ռեստորաններում, համտեսել ու պատրաստել համեղագույն ուտեստներ, բայց...

- Այո', ես աշխատել եմ «Մետեխի պալաս», «Քորթիարդ Մարիոթ», «Հուալինգ», «Ռեդիսոն բլյու» եւ առայսօր «Ռեփաբլիկ» հյուրանոցների ռեստորաններում: Ու թեեւ ավելի շատ նորարար եմ, բայց խինկալին մնում է խինկալի... ու հենց՝ մայրիկիս պատրաստածը:

- Փաստորեն ձեր տան խոհարարը մայրի՞կդ է:

- Այո', շատ համեղ է պատրաստում:

- Մինչեւ չեկավ հարսն ու «չխլեց շորեփը»... ի դեպ, շնորհավոր ամուսնություն, սիրո ու հարգանքի հավերժ միություն ձեզ:

- Եթե, իհարկե, հաշվի չառնենք այն հանգամանքը, որ խոհանոցում երկու կին չի լինում... Իսկ շնորհավորանքի համար, շնորհակալ եմ: Երեք ամիս է,

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)



ՅՈՒՅԱՆԴԵՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ՎԵՓԽՎԱՋԵՆԵՐԻՆ

ՋՈՎԱՆՆԻՆ ԿԴԱՌՆԱՐ 70 ՏԱՐԵԿԱՆ

Նոյեմբերի 15-ին Թբիլիսիի Արվեստի պալատում բացվեց եւ երկու շաբաթ կգործի ցուցահանդես՝ նվիրված արդեն չորս սերունդ ներառող տաղանդավոր նկարիչներ Վեփխվածեներին:

Այդ գերդաստանի հիմնադիրն էր ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ, ստալինյան մրցանակի դափնեկիր Վանո Վեփխվածեն: Նրա որդին՝ Ալեքսի Վեփխվածեն, Վրացական ԽՍՀ վաստակավոր նկարիչ էր, պետական մրցանակի դափնեկիր, թոռը՝ Ջովաննի Վեփխվածեն, Թբիլիսիի հայ համայնքի անկեղծ բարեկամներից մեկը, տաղանդավոր գեղանկարիչ էր, լեզվագետ, գրող: Գերդաստանի չորրորդ սերունդը ներկայացնում է Ջովաննիի որդին, 35-ամյա Բրունո Վեփխվածեն, որը 2014 թվականին Իտալիայում ճանաչվել էր լավագույնը 100 երիտասարդ նկարիչների թվում:

2016 թվականին Ջովաննի Վեփխվածեն վախճանվեց: Այս տարի լրացավ նրա 70-ամյակը:

Ջովաննի Վեփխվածեի վրձնին են պատկանում արտասովոր, հիանալի հին տները, հիանալի դիմանկարները, սիրված Թբիլիսիի քաղաքային պատկերները, որոնք ներկայացված են այնքան հստակ ու պարզ, որ երբեմն թվում է, թե դրանք պատկերված են ոչ թե վրձինով, այլ լուսանկարված են բնօրինակից: Նկարիչը հաճախ օգտագործում էր գունագեղ, հագեցված երանգները: Ջովաննի Վեփխվածեն իտալական արվեստի երկրպագուն էր, նա բազմիցս եղել է Իտալիայում, ինքնուրույն սովորել իտալերեն: Իտալական թեմայով նա ստեղծել է մի շարք կտավներ՝ «Իմ Նեապոլը», «Ֆլորենցիան» եւ մյուս գործերը: Իր զավակներին կոչեց իտալական անուններով՝ Դոմենիկա եւ Բրունո: Ջովաննին այնքան էր հագեցված իտալական ոգով, որ նրա պատկերած գեղարվեստական գործերը յուրովի իտալական եւ վրացական արվեստի դպրոցների սինթեզներ էին համարվում: Վարպետի շատ կտավներ ներկայացվել են բազմաթիվ ցուցահանդեսներում, ինչպես Վրաստանում, այնպես էլ՝ արտասահմանում: Նրա կտավները լայնորեն ներկայացված են համաշխարհային ճանաչված պատկերասրահներում եւ մասնավոր հավաքածուներում:

Իր բնույթով Ջովաննի Վեփխվածեն ե'ւ պարզ, ե'ւ բարդ մարդ էր, հիանալի կտավների հեղինակ, որոնք աչքի էին ընկնում ռեալիզմով, ճաշակի եւ արհեստավարժության բարձր մակարդակով: Նկարչի սիրած «Հին ալբոմ» բնանկարում, որտեղ լուսանկարներում տեսնում ենք նրա մայրական կողմից ազգությամբ հայ ապուպապին ու տատին, սեղանի վրա առարկաները պատկերված են այնպես, իբր դրանք դիտողին պատմում են խեղված ճակատագրերի եւ ընդհատված կյանքի մասին՝ առնչված 1915 թվականի Մեծ եղեռնի հայերի ողբերգության հետ:

Ջովաննին առանձնակի բավականությամբ էր պատկերում բնանկարները: Նրա կտավներում հավիտենական դարձան հին Թբիլիսիի հինավուրց կառույցները, որոնք վաղուց արդեն գոյություն չունեն: Դրանք հին տնակներն են՝ տեղադրված լեռան ստորոտում, խորհրդային ժամանակներում քանդված Թբիլիսիի ամենամեծ երկնագույն մզկիթը: Նա վարպետորեն էր պատկերում անցյալի գիրկն անցած կինտոներին ու ղարաչոխելիներին, ովքեր ժամանակ էին անցկացնում Քուռ գետի լաստերի վրա, թափառող կրկեսը՝ հիացած հանդիսատեսով, տիկնիկային թատրոնը, եւ այդ ամենը ներկայացվում էին նրան յուրօրինակ արտահայտչությամբ եւ հստակությամբ:

Ջովաննի Վեփխվածեի ստեղծագործությունը դասական գեղանկարչություն է, որը երբեք չի մեռնում, քանի որ չի ենթարկվում ժամանակի ազդեցությանը: Նկարիչը կատարելությամբ տնօրինում էր վեց լեզուների, լույս ընծայեց երկու «Նկարչի նոթերը» եւ «Ջովաննին պատմում է» պատմվածքների ժողովածուները: Նրա պատմվածքները սեղմ են, անկեղծ, գրավիչ, հետաքրքիր եւ բարյացակամ:

Ես երջանիկ եմ, որ ինձ բախտ է վիճակվել լինել Ջովաննի Վեփխվածեի մտերիմը: Այդ հիանալի մարդու հիշատակը միշտ վառ կմնա նրա ընկերների եւ երկրպագուների սրտերում, իսկ նրա գեղարվեստական կտավները ապագա սերունդների անգնահատելի ժառանգությունն են:

ՄԱՐԻՆԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ - ՄՈՍԵՍՈՎԱ
Բանաստեղծուհի

ԼԱՎԱԳՈՒՅՆԸ ԵՐԿՐՈՒՄ

ԷՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԸ ՆՎԱՃԵՑ «ՎՐԱՍՏԱՆԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԽՈՀԱՐԱՐ» ԿՈՉՈՒՄԸ

(Սկիզբը՝ 5-րդ էջում)

ինչ ես ու Սալին ամուսնացել ենք: Եվ ինձ համար շատ հաճելի է, երբ կինս մատուցում է իր պատրաստած ուտեստը: Ի դեպ, մասնագիտությամբ լրագրող է, բայց խոհարարական իր ունակություններով հաստատ կմրցեր ինձ հետ...

- Բայց դե' .... հնուց եկած խոսք է՝ խոհանոցի թագուհին կինն է:

- Հիմա արդեն թագավոր էլ կա...

- Իսկ կա՞ արդյոք տարբերություն կին եւ տղամարդ խոհարարների միջեւ:

- Կարծում եմ, չկա: Ամեն ինչ պայմանավորված է ցանկությամբ, ձգտումով, անընդհատ սովորելու մղումով, մենք բոլորս հավասար ենք կյանքում, հետեւաբար, նաեւ խոհանոցում: Ով ավելի շատ է ձգտում, նա էլ հասնում է հաջողության ու լավագույնը դառնալու կոչման:

- Էրիկ, իսկ հայկական խոհանոցից օգտվու՞մ ես:

- Հայկականն ու վրացականը շատ նմանություններ ունեն: Ու դա բացահայտում եմ՝ հատկապես հին վրացական խոհանոցն ուսումնասիրելիս: Այն իսկապես բացառիկ հումք ու աղբյուր է երեւակայության համար: Հնում՝ նորի փնտրտուքի մեջ, հայտնաբերեցի օրինակ, «սինորի» կոչվող վրացական հացը, որ շատ նման է հայկական լավաշին ու նույնպես պատրաստվում է առանց թթխմորի: Ինչեւէ: կինս վրացուհի է եւ համոզված եմ, հայ-վրացականը մեր ընտանիքում շատ հրաշքներ կգործի:

- Մոտենում է հրաշքներ գործելու ամենաավանդական ու ընտանեկան տոնը՝ Ամանորը: Կա՞ մի ուտեստ, որ պարտադիր պատրաստում եք ձեր ընտանիքում, եւ որով կարող եք կիսվել «Վրաստանի» ընթերցողի հետ:

- Ում համար ամենաընտանեկան, ում համար՝ ամենագործնական: Ցավոք, այդ օրերին խոհարարներս գերզբաղված ենք աշխատատեղում, թեեւ տան ուտեստները միեւնույն է պատրաստվում են եւ, հատկապես մեկը՝ մեր ամենասիրելին ու մշտականը աղ դրած սաղմոնը (սյոմգա): Այն պատրաստելու համար անհրաժեշտ է 400 գ սաղմոնի ֆիլե, 500 գ աղ, 200 գ շաքարավազ, 30 գ սամիթ, 15 գ կոնյակ, եփած եւ մանրացված ճակնդեղ, որով ամբողջությամբ պատվելու է սաղմոնը, ձկանը կարմրություն հաղորդելու համար: Կարելի է ավելացնել նաեւ նարնջի մանրացված կեղեւ (ցեդրա): Պատրաստված սաղմոնը 2 օր պահում եք սառնարանում, ապա հանում, անցկացնում ջրի տակ: Եվ՝ վերջ, հրաշքը պատրաստ է:

- Հրաշալի, կարծում եմ սաղմոնն այս տարի հատկապես կվաճառվի... Եվ վերջում, նորից գանք մեր «Bocuse d'Or»-ին: Հասկանում եմ, ամեն խոհանոց իր գաղտնիքներն ունի, բայց ի՞նչ ես մտադիր պատրասել, ի՞նչով զարմացնել:

- Այն, որ անպայման օգտվելու եմ վրացական հին խոհանոցի պատմության էջերից, դա՝ հաստատ: Իսկ մնացածը թողնեմ գաղտնիք: Խոհանոցը թերեւս միակն է, որ մինչեւ վերջ մի բան ու թերեւս ամենակարեւորը՝ թողնում է գաղտնի...

-...Ուրեմն, թող որ հենց այդ գաղտնիքը հաջողություն բերի քեզ ու Վրաստանին: Իսկ Նոր տարին պարգեւի իսկական Հրաշք՝ եռյակ դարձնելով ձեր նորաստեղծ ընտանիքը: Շնորհակալ եմ հարցազրույցի համար...

ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ

ՆՈՐ ԳԻՐՔ

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԷՋ

«Վրաստան» թերթն արդեն գրել է, որ ընթացիկ տարվա մայիսին, Երեւանում, «Հովհաննես Թումանյանի թանգարանում» տեղի ունեցավ վիրահայ վաղամեռիկ գրող, բանաստեղծ, թարգմանիչ Վիկտոր Հովսեփյանի (1947-1996թթ.) «Նանե, Նանե, կրակ տուր ինձ»(2018, Թբիլիսի, «Վերնատուն») մանկական տպագրված ու անտիպ բանաստեղծությունների ու հեքիաթների ժողովածուի շնորհանդեսը, որը ներկաների կողմից դիտվեց որպես՝ «Մեր օրերի մանկական գրականության լավագույն էջերից մեկը»:

Երկու օր առաջ գիրքը ներկայացվեց Թբիլիսիի թիվ 104 հայկական դպրոցում կրթօջախի տնօրինության նախաձեռնությամբ:

Թբիլիսյան շնորհանդեսին ներկա էր գրողի այրին՝ տիկին Թերեզան: Նշենք, որ գրողի ծննդյան 70-ամյակին նվիրված «Նանե, Նանե, կրակ տուր ինձ» ժողովածուն հետմահու կազմել եւ հրատարակել է Վիկտոր Հովսեփյանի դուստրը՝ Թբիլիսիի «Թումանյանի տուն» գիտամշակութային կենտրոնի ղեկավար Գիսանե Հովսեփյանը: Հենց նրա ողջույնի խոսքով էլ բացվեց շնորհանդեսը, որում նա հանգամանորեն անդրադարձավ գրողի՝ իր ժամանակների հոգեւոր կյանքի ներկայանալի դեմքերով առանձնացող տոհմի պատմությանը: Վիկտոր Հովսեփյան արվեստագետի մարդկային ու գրական դիմանկարը բնորոշող մանրամասներով ներկայացրեց նրա կենսագրությունն ու ստեղծագործական կարճ, բայց վիրահայ գրական մշակույթում մնայուն հետագիծ թողած ճանապարհը: Նշեց բանաստեղծի կյանքում կարեւորված իրողության՝ վիրահայ ու վրաց գրական աշխարհների հետ նրա շփումների եւ դրանց արդյունքում՝ վրաց նշանավոր բանաստեղծ Տերենտի Գրանելու եւ այլ նշանավորների ստեղծագործությունների՝ նրա կողմից կատարված թարգմանությունների, ինչպես եւ ստեղծագործողի գործերի վրացերեն թարգմանության մասին, որ իրագործել են թարգմանական արվեստի նշանավորներ՝ գրող, արեւելագետ Զեզվա Մեդուլաշվիլին (1939-2018 թթ.) եւ բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարը:

Միջոցառմանը ներկա Վրաստանում Հայաստանի դեսպանության առաջին քարտուղար Արթուր Սարգսյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, մանրանկարիչ Մերուժան Շահումյանը, Վիրահայոց թեմի մամլո եւ լրատվական բաժնի տնօրեն Սուսաննա Խաչատրյանը, դպրոցի տնօրեն Իրինա Ժամկոչյանը, գրադարանավարուհի Հասմիկ Անտոնյանը, ում նախաձեռնությամբ ու կազմակերպմամբ էլ տեղի ունեցավ միջոցառումը, իրենց ելույթներում արժեւորեցին մանկական գրականության ավանդական անդաստանում նշանակալի դերակատարում բերող նոր գիրքը, ինչպես նաեւ հանդես եկան վիրահայ կրթաշխարհին ու մշակութային կյանքին վերաբերող առաջարկություններով:

Շնորհանդեսի գեղարվեստական մասում ներգրավվել էին դպրոցի աշակերտները. նրանց կատարմամբ հնչեցին Վիկտոր Հովսեփյանի բանաստեղծությունները, բեմականացվեց «Ձախորդ Շլդիկի հաջողությունը» հեքիաթը:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՅ-ԻՏԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

Նոյեմբերի 20-22-ը Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը տիկնոջ՝ Աննա Սարգսյանի հետ, պաշտոնական այցով գտնվում էր Իտալիայում:

Վարչապետի այցը սկսվեց Վենետիկ քաղաքից. Նիկոլ Փաշինյանը եղավ Վենետիկի Սուրբ Ղազար կղզու Մխիթարյան միաբանության Մայրավանքում, որտեղ հանդիպում ունեցավ Մխիթարյան միաբանության անդամների հետ:

Այնուհետեւ, Նիկոլ Փաշինյանը մեկնեց Միլան, որտեղ Սուրբ Քառասուն Մանկունք եկեղեցում հանդիպում ունեցավ հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

Միլանից Հայաստանի վարչապետը մեկնեց Հռոմ, որտեղ հանդիպումներ ունեցավ Իտալիայի բարձրագույն ղեկավարության հետ: Հռոմի Կիջի պալատում՝ Իտալիայի վարչապետի պաշտոնական նստավայրում, կայացավ Նիկոլ Փաշինյանի հանդիպումը Իտալիայի նախարարների խորհրդի նախագահ Ջուզեպպե Կոնտեի հետ: Հանդիպմանը քննարկվեցին երկկողմ հարաբերությունների զարգացման հեռանկարները, կանխագծվեցին համագործակցության ոլորտները: Հանդիպումից հետո, երկու երկրների վարչապետերը համատեղ մամլո ասուլիսում հանդես եկան բանակցությունների արդյունքներն ամփոփող հայտարարություններով:

Այցի շրջանակներում, Հռոմում Նիկոլ Փաշինյանը հանդիպում ունեցավ նաեւ Իտալիայի Սենատի նախագահ Մարիա էլիզաբետա Կազելատիի եւ Իտալիայի արտաքին առեւտրի ինստիտուտի նախագահ Կառլո Ֆերոյի հետ:

Հռոմում Հայաստանի վարչապետն ու նրա տիկինը այցելեցին նաեւ Սուրբ Նիկողայոս Հայ Կաթողիկե եկեղեցի եւ Քահանայապետական Լեւոնյան վարժարան:

ԱՆՇԿԱՑՎԵՑ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

Նոյեմբերի 16-ին, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, տեղի է ունեցել Անվտանգության խորհրդի արտահերթ նիստ:

- Այսօրվա Անվտանգության խորհրդի մեր նիստը, ըստ էության, արտահերթ է, բայց դա կապված է այն հանգամանքի հետ, որ նախորդ նիստերի օրակարգը ծանրաբեռնված է եղել, եւ մենք օրակարգի որոշ հարցեր տեղափոխել ենք այսօրվա քննարկմանը,- նշեց Նիկոլ Փաշինյանը:

Անվտանգության խորհրդի նիստի օրակարգում եղել են անվտանգության ոլորտին վերաբերող մի շարք հարցեր:

ԱՐԹՈՒՐ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԸ՝ ՅՈՒՆԻՍԵՖ-Ի ԲԱՐԻ ԿԱՄՔԻ ԴԵՍՊԱՆ

Օլիմպիական խաղերի, աշխարհի, Եվրոպայի չեմպիոն Արթուր Ալեքսանյանը դարձավ Հայաստանի Հանրապետությունում ՅՈՒՆԻՍԵՖ-ի բարի կամքի դեսպան:

Օլիմպիական չեմպիոնը կաջակցի ՅՈՒՆԻՍԵՖ-ին բարձրաձայնելու երեխաների առողջ ապրելու եւ սնուցման իրավունքը՝ առաջնահերթություն տալով առավել խոցելի երեխաներին:

-Ինչ համար մեծ պատիվ է դառնալ բարի կամքի դեսպան: Առաջարկն ընդունել եմ անմիջապես, քանի որ կապված է երեխաների ապագայի հետ,- ասաց Ալեքսանյանը:

Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի ներկայացուցիչ Տանյա Ռադոչայը իր ողջույնի խոսքում շնորհակալություն հայտնեց Օլիմպիական չեմպիոնին ՅՈՒՆԻՍԵՖ-ի մեծ ընտանիքին միանալու համար եւ վստահեցրեց, որ Ալեքսանյանի օգնության միջոցով Հայաստանում առավել մեծ արդյունքների կհասնեն:

ՀՀ-ում ՅՈՒՆԻՍԵՖ-ի բարի կամքի դեսպան է նաեւ Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի եւ իտալական «Ռոմա»-ի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանը:

ԿԱՆԽԱԳԾՎԵՑԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ԿԱՏԱՐ

Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը պաշտոնական այցով գտնվում էր Կատարում: Այցի սկզբում կայացավ Հայաստանի նախագահի եւ Կատարի էմիր Թամիմ բին Համադ Ալ Թանիի առանձնազրույցը:

Հանդիպմանը Հայաստանի նախագահն ու Կատարի էմիրն ընդգծեցին երկու բարեկամ երկրների միջեւ փոխգործակցության մեծ ներուժը, հարաբերությունների ընդլայնման ու ամրապնդման կարեւորությունը: Որպես համագործակցության հնարավոր ուղղություններ՝ նրանք նշեցին առողջապահության, կրթության, գիտահետազոտական ոլորտները, ինչպես նաեւ Դոհայում ուսանելու հնարավորությունը:

Պաշտոնական այցի շրջանակներում, Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը Դոհայում հանդիպում ունեցավ Կատարի վարչապետ, ներքին գործերի նախարար Աբդուլաի բին Նասեր բին Խալիֆա ալ Թանիի հետ:

Հանդիպմանը քննարկվեցին երկու երկրների միջեւ հարաբերությունների խորացման հնարավորությունները:

Փոխգործակցության համար, մասնավորապես, հետաքրքիր են համարվել շինարարության, անշարժ գույքի, զբոսաշրջության, գյուղատնտեսության եւ սննդի անվտանգության ոլորտները:

Պայմանավորվածության համաձայն, Կատարը չեղարկեց Հայաստանի քաղաքացիների համար վիզաներ:

Հանդիպման ավարտին Հայաստանի նախագահը Կատարի ղեկավարին հրավիրեց այցելել Հայաստան:

ԿԱՅՈՒՆ ԱՃ ԵՎ ԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Կոռուպցիայի դեմ պայքարը եւ տնտեսական ոլորտում հավասար պայմանների ապահովումը Հայաստանի ապագա զարգացման կարեւորագույն նախապայմաններն են:

Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի նոր զեկույցի համաձայն, 2019-ին Հայաստանին հաջողվել է պահպանել ՀՆԱ-ի կայուն աճ, չնայած հանքարդյունաբերության եւ գյուղատնտեսության ոլորտներում որոշակի անկմանը: Ընթացիկ տարում Հայաստանի ՀՆԱ-ն, Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի տվյալներով, աճել է 6 տոկոսով:

Հայաստանի կառավարությանը հաջողվել է այս ժամանակահատվածում նաեւ բարելավել ֆիսկալ իրավիճակը՝ նվազեցնելով հանրային պարտքի չափը ՀՆԱ-ի նկատմամբ 60-ից մինչեւ 55,7 տոկոսի:

Զեկույցի համաձայն, Հայաստանի նոր կառավարության առաջնահերթությունն է ոչ միայն բարձր տնտեսական աճը, այլ դրա արտացոլումը քաղաքացիների իրական կյանքի որակի բարելավման վրա: Հատկապես եվրոպական կողմը կարեւորում է Հայաստանում իրականացվող հարկային բարեփոխումները եւ այդ ոլորտի թափանցիկության բարձրացումը:

Համեմատության համար, հարեւան Վրաստանում ու Ադրբեջանում 2019-ին ՀՆԱ-ն աճելու է Հայաստանից ցածր, իսկ սղաճը՝ Հայաստանից բարձր տեմպերով: Զեկույցի համաձայն, Վրաստանում նախատեսվում է ՀՆԱ-ի 4,5 տոկոս աճ եւ ավելի քան 4 տոկոս սղաճ, իսկ Ադրբեջանում է՝ ՀՆԱ-ի աճը, է՝ սղաճն ընթացիկ տարում կազմելու են 2,8 տոկոս:

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Նոյեմբերի 18-19-ը Երեւանում անցկացվեց «Թվային լուծումներ՝ միջսահմանային համագործակցության եւ առեւտրի դյուրացման համար» խորագրով տարածաշրջանային համաժողով, որին մասնակցեցին Հայաստանի փոխվարչապետ Տիգրան Ավինյանը, պետական եկամուտների կոմիտեի նախագահ Դավիթ Անանյանը, Համաշխարհային մաքսային կազմակերպության գլխավոր քարտուղար Կունիո Միկուրիան, Հայաստանում Եվրոպական միության դեսպան Անդրեա Վիկտորինը, Հայաստանում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի մշտական ներկայացուցիչ Դմիտրի Մարիասինը, ինչպես նաեւ միջազգային կառույցների, պետական եւ մասնավոր ոլորտների, տարբեր երկրների մաքսային ծառայությունների ներկայացուցիչներ:

Համաժողովի սկզբում երկկողմ փաստաթղթեր ստորագրվեցին Հայաստանի պետական եկամուտների կոմիտեի եւ Վրաստանի ֆինանսների նախարարության, ինչպես նաեւ Հայաստանի պետական եկամուտների կոմիտեի ու Իրանի Իսլամական Հանրապետության մաքսային ծառայության միջեւ:

Նշենք, որ համաժողովն անցկացվում է «Աջակցություն Հայաստանին՝ միգրացիայի եւ սահմանների կառավարման ոլորտներում» ծրագրի շրջանակում, որը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից եւ իրականացվում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի ու Հայաստանում Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի հետ համագործակցության արդյունքում:

ՄԵԿՆԱՐԿԵՑ ԳՈՀԱՐ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԸ

Ընթացիկ տարվա նոյեմբերի 21-ից մինչեւ դեկտեմբերի 14-ը Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ, Հայաստանի երաժշտական ընկերությունը, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնը, Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան կանցկացնի Գոհար Գասպարյանի անվան մեներգիչների (դասական երգեցողություն) համահայկական մրցույթը:

Մրցույթն այս տարի նվիրվում է ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, Պետական մրցանակի դափնեկիր, պրոֆեսոր Գոհար Գասպարյանի ծննդյան 95-ամյակին:

Մրցույթն անցկացվում է 3 փուլով. 1-ին փուլը՝ նոյեմբերի 22-24-ը, 2-րդ փուլը՝ դեկտեմբերի 2-3-ը, Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի՝ Ղ.Սարյանի անվան օպերային ստուդիայի դահլիճում, 3-րդ փուլը՝ դեկտեմբերի 10-ին, Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի դահլիճում:

Մրցույթի դափնեկիրների եզրափակիչ գալա համերգը եւ Գոհար Գասպարյանի ծննդյան 95-ամյա հոբելյանական հանդիսությունը կկայանա երգչուհու ծննդյան օրը՝ դեկտեմբերի 14-ին, Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում:

Մրցույթի հաղթողների համար (կանանց եւ տղամարդկանց անհատական) սահմանվել են մրցանակներ ու «Արծանիկ» մրցանակը, որը հեղինակել է քանդակագործ Արման Նուռը:

Սահմանվել են նաեւ հատուկ մրցանակներ ստեղծագործական միությունների, մշակութային կազմակերպությունների, անհատների կողմից:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՆՈՅԵՄԲԵՐ

25.11.2019 Սուրբ Յուլիանե եւ Վասիլուհի կույսերի հիշատակության օր

26.11.2019 Սուրբ Ղուկիանոս քահանայի, Տարագրոս, Պրոբոս եւ Անդրոնիկոս վկաների, եւ Սուրբ Պողոս առաքյալի աշակերտ Ոնեսիմոսի հիշատակության օր

30.11.2019 Սուրբ Առաքյալների եւ մեր առաջին լուսավորիչներ Թադեոսի եւ Բարդուղիմեոսի հիշատակության օր

Սուրբ Թադեոսը եւ Սուրբ Բարդուղիմեոսը Քրիստոսի 12 առաքյալներից էին, ովքեր, գալով Հայաստան, քրիստոնեություն քարոզեցին հայ ժողովրդին՝ արժանանալով «առաջին լուսավորիչներ» կոչմանը: Դեռեւս քրիստոնեության արշալույսին, նրանք նահատակվեցին Հայաստանում: Առաքյալների գործունեության արդյունքում, 301 թվականին հայ ժողովուրդն աշխարհում առաջինը քրիստոնեությունը հռչակեց իբրեւ պետական կրոն:

ԵՂԱՆԱԿ

ԱՌԱՋԻՆ ՁՅՈՒՆԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Նոյեմբերի 21-ի լույս 22-ի գիշերը այս տարվա առաջին ձյունն է տեղացել Թբիլիսիի արվարձանում՝ Ծխնեթի, Կոջորի եւ Տաբախմելա ավաններում: «Թբիլսերվիս գրուպ» մունիցիպալ ընկերությունն աշխատում է արտակարգ ռեժիմով՝ մաքրելով ճանապարհներն ու տեխնիկական աղ շաղ տալով դրանց վրա:

Նոյեմբերի 22-ին Վրաստանի մայրաքաղաքում առավելագույն ջերմաստիճանը իջավ 5 աստիճան, ձյունախառն անձրեւով:

ՍՊՈՐՏ

ՃԱՆՐԱՄԱՐՏ. ԼԱՇԱ ՏԱԼԱԽԱՁԵԻ ԱԿՏԻՎՈՒՄ՝ ԵՐԵՔ ՈՍԿԵ ՄԵԴԱԼ

Աշխարհի լավագույն ծանրորդ Լաշա Տալախաձեն Թուրքիայում ընթացող Նայիմ Սուլեյմանօղլու (օլիմպիական խաղերի եռակի չեմպիոն) անվան միջազգային մրցաշարին, հրում եւ պոկում անվանակարգերում բարձրացրել է 208/242/450 կգ եւ նվաճել երեք ոսկե մեդալ: Մրցաշարին, որտեղ ելույթ են ունեցել 23 երկրների ներկայացուցիչներ, Տալախաձեն լավագույնն է: Մրցաշարին խաղարկվել են նաեւ Տոկիոյի 2020 թվականի օլիմպիական խաղերի արտոնագրերը:

ՖՈՒՏԲՈԼ. 1:9 ԽԱՅՏԱՌԱԿ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀՐԱԺԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՏՃԱՌ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅՈՒՄ

Անցկացվեցին Եվրոպայի 2020 թվականի ֆուտբոլի առաջնության որակավորման փուլի եզրափակիչ հանդիպումները:

Այդ փուլում առանձնակի «աչքի ընկավ» Հայաստանի հավաքականը: Այն նախ սեփական դաշտում նվազագույն՝ 0:1 հաշվով, զիջեց Հունաստանի հավաքականին, ապա 1:9 հաշվով խայտառակ պարտություն կրեց Իտալիայի ազգային ընտրանուց: Սա Հայաստանի ընտրանու պատմության մեջ ամենախոշոր հաշվով պարտությունն է, ինչն էլ դարձավ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահի (Արթուր Վանեցյան) եւ ֆեդերացիայի գործկոմի մյուս անդամների հրաժարականի պատճառ: Նշենք, որ Հայաստանի թիմը 10 միավորով «J» խմբում զբաղեցրեց 5-րդ հորիզոնականը:

«D» խմբում հանդես եկող Վրաստանի հավաքականը եզրափակիչ փուլում 0:1 հաշվով զիջեց Շվեյցարիայի թիմին եւ 8 միավորով հանգրվանեց 4-րդ տեղում:

Ինչ վերաբերում է առաջնության եզրափակիչ փուլի ուղեգրերին, ապա 20 հավաքականներ արդեն նվաճել են այն: Դրանք Ռուսաստանի, Թուրքիայի, Ֆրանսիայի, Խորվաթիայի, Չեխիայի, Ուկրաինայի, Ուելսի, Դանիայի, Իսպանիայի, Իտալիայի, Նիդերլանդների, Լեհաստանի, Պորտուգալիայի, Ավստրիայի, Անգլիայի, Բելգիայի, Գերմանիայի, Ֆինլանդիայի, Շվեյցարիայի եւ Շվեդիայի հավաքականներն են:

Նշենք, որ «Եվրո-2020»-ը, որին կմասնակցի 24 հավաքական, կանցկացվի Եվրոպայի 12 քաղաքի 12 մարզադաշտերում: «Եվրո-2020» խմբային փուլի վիճակահանությունը կկայանա նոյեմբերի 30-ին:

ԹԱՏՐՈՆ

«Ի՞ՆՉ ԷՐ ՊԱՏԱՀԵԼ ԳԱԶԱՆԱՆՈՑՈՒՄ». ԱԴԱՄՅԱՆՑԻՆԵՐԻ ՆՈՐ ԱՌԱՋՆԱԽԱՂԸ

Նոյեմբերի 21-ին Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնը ներկայացավ ամերիկացի դրամատուրգ Էդվարդ Օլբիի (1928-2016) «Ի՞նչ էր պատահել գազանանոցում» պիեսով: Առաջնախաղը կայացավ մայրաքաղաքի Ալ. Գրիբոյեդովի անվան ռուսական պետական դրամատիկական թատրոնի փոքր դահլիճում:

Բեմադրիչը թբիլիսցի անվանի ռեժիսոր, Կ.Մարջանիշվիլու անվան պետական մրցանակի դափնեկիր Լեւան Սվանաձեն էր, նկարիչը՝ Վրաստանի թատերական գործիչների միության նախագահ, նկարիչ Գիորգի Գեգեճկորին, կոմպոզիտորը՝ Գոգիտա Մահսուրաձեն:

Ադամյանցիների հերթական պրեմիերան, «Գլխավոր դեր»-ից (բեմադրիչ՝ Դիմիտրի Խվթիսիաշվիլի) հետո (առաջնախաղը՝ սեպտեմբերի 24-ին), երկրորդն է, որ բեմադրվում է հրավիրված ռեժիսորի կողմից:

«Ի՞նչ էր պատահել գազանանոցում» պիեսը մարդու միայնության հոգեբանության ու փիլիսոփայության մասին է, որ այս անգամ ներկայացվեց մեր թատրոնի երիտասարդ դերասաններ Դավիթ Բարսեղյանի եւ Արթուր Գասպարյանի մարմնավորմամբ:

Ըստ պետհայդրամայի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանի, «Ի՞նչ էր պատահել գազանանոցում»-ը բարդ գործ է, իր տեսակի մեջ նոր՝ ե'ւ դերասանների, ե'ւ վիրահայ հանդիսատեսի համար: Թբիլիսիի հայկական թատրոնի 164-րդ թատերաշրջանում այն ներկայացված 7 առաջնախաղերից մեկն էր, ըստ որում սեփական շենքի բացակայության պայմաններում:

- Հայաստանի թատերական գործիչների հետ պայմանավորվածություն ունենք,- շարունակեց Արմեն Բայանդուրյանը,- վրացի ռեժիսորների բեմականացումները ներակայացնել նաեւ Հայաստանում՝ «Վրաց ռեժիսորների բեմադրությունները Թբիլիսիի հայկական թատրոնում» խորագրի տակ: Ինչ վերաբերում է ընթացիկ օրերին, ապա դեկտեմբերի կեսերին ունենք եւս մեկ՝ մեր թատրոնի երիտասարդ ռեժիսոր Գագիկ Մելքումյանի բեմադրությամբ Ակակի Ծերեթելու «Կինտո»-յի պրեմիերան: Այժմ պատրաստվում ենք «Ամանորյա հեքիաթ» մանկական ներկայացմանը, որն անպայման խաղալու ենք Վրաստանի հայաբնակ շրջաններում: Իսկ մինչեւ տարեվերջ, Թբիլիսիի գրիբոյեդովյան թատրոնում կրկին կներկայանանք մեր հանդիսատեսին արդեն ծանոթ Արմենուհի Սիսյանի «Ագռավն ասաց» մոնոդրամայով:

Նշենք, որ նոյեմբերի 17-ին, Արմեն Բայանդուրյանի բեմադրությամբ եւ երիտասարդ ադամյանցի Աշոտ Սիմոնյանի դերակատարմամբ «Ագռավն ասաց» մոնոդրաման ներկայացվեց նաեւ Երեւանի Գ.Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի վերանորոգված փոքր դահլիճում:

Եվ վերջում, կատարելով մեր ավանդական անդրադարձը թատրոնի շենքի վերակառուցման աշխատանքներին, ընթերցողներին տեղեկացնենք, որ, ըստ նախագծի, դեկտեմբերի կեսերից արդեն մեկնարկում են թատրոնի ներշինարարական աշխատանքները:

ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Լուսանկարը՝ ՎԱԼԵՐԻ ՀՈՒՆԱՆՅԱՆՑԻ

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 6.Շեքսպիրի հայտնի ողբերգության սիրահար հերոսը: 8.Երաժշտական գործիք: 10.Անմազ, անբույս: 11.Ընտիր, ազնիվ: 13.Իրաքի նախկին նախագահ ... Հուսեյն: 14.Աշխարհամաս: 16.Գերմանական ավտոմեքենա: 17.Թանկարժեք մորթով կենդանի: 18.Կապիկի տեսակ: 20.XII դարի վրացի պոետ ... Ռուսթավելի: 21.Քաղաք Արեւմտյան Հայաստանում: 22.Մարմնի մեջ շրջող հյութ: 26.Ղազախ աշուղ: 28.Ֆրանսիացի գրող Ալեքսանդր ...: 31.Միանիշ թիվ: 32.Լիտվայի դրամական միավորը: 34.Դրական լիցք ունեցող էլեկտրոդ: 35.Քաղաք Հայաստանում: 36.Էգ ոչխար: 38.Ջրային տարածություն: 41.Տեղացի, բնաշխարհիկ: 43.Սիրուհի: 45.Շարքով քայլելը: 48.Տավար, անասուն: 49.Իտալացի ֆուտբոլիստ ... Տոնի: 52.Փորձի համար վերցված նյութ: 53.Ուղեկցորդ: 54.Շքեղություն, ճոխություն: 55.Մահացածի մարմին: 56.Վարակիչ հիվանդություն: 57.Մշտադալար փոքր ծառ: 58.Կարասի, տնային գույք: 59.Սար: 60.Ոսկորները պատող մկանածին հյուսվածք:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Ռեւմատիզմ: 2.Չափածո մեծածավալ ստեղծագործություն: 3.Փողկապ: 4.Գնել, ձեռք բերել: 5.Ռուս երգիչ Դմիտրի ...: 7.Շարժական սանդուղք: 9.Ելուզակ, գող: 12.Կրակարան, օջախ: 15.Ազգությամբ վրացի ֆրանսիացի դերասանուհի Մարիա ...: 19.Դիմացկուն, մնայուն: 23.Անմշակ, վայրենի: 24.Սածիլ: 25.Ուկրաինայի խորհրդարանը: 27.Մահմեդական աղանդ: 29.Հույն երգահան: 30.Կերոն, կճատ: 32.Հայ շախմատիստ, միջազգային գրոսմայստեր ... Արոնյան: 33.Փոքրիկ տուն: 37.Քիմիական տարր, կարծր արծաթագույն մետաղ: 39.Սպիտակ: 40.Անդրավարտիք: 41.Երկնագույն կապույտ: 42.Երգչուհի ... Այվազյան: 44.Ճիրան, ճանկ: 46.Հայաստանի մայրաքաղաքներից: 47.Առեւտուր անելու տեղ: 50.Նրբամիտ, բանիմաց: 51.Կզաքիսների ցեղին պատկանող գիշակեր կենդանի:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Տեմպ: 4.Ինքնակամ: 10.Մուսա: 11.Ուրալյան: 14.Գամառ: 15.Մարականա: 16.Ասա: 17.Կասեմ: 19.Բալ: 21.Ոգնի: 24.Յանա: 26.Գրական: 29.Գրազ: 30.Ռաֆֆի: 31.Գունդ: 32.Պնակ: 33.Գանա: 35.Վհատ: 37.Ծիր: 38.Որակ: 40.Որ: 42.Նուբար: 43.Կարս: 45.Ուր: 46.Երկու: 47.Ամենա: 49.Սոլ: 50.Կտակ: 52.Արեշ: 53.Յոդ: 54.Ջրալի: 55.Նանա: 57.Անի: 58.Ֆինն: 59.Աղասի: 61.Կատու:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Տյուսաբ: 2.Պալմա: 3.Նկարազարդ: 4.Իմ: 5.Նուգա: 6.Քսան: 7.Նամակ: 8.Կեռաս: 9.Մթածմինդա: 12.Յասոն: 13.Նա: 18.Արագած: 20.Լյա: 22.Իլֆ: 23.Եգիպտոս: 25.Ազդարար: 27.Կուկիա: 28.Ան: 29.Գոգեն: 34.Նոբելյան: 36.Հրանտ: 39.Արկադի: 41.Գրաշի: 44.Ամարաս: 45.Ունելի: 48.Երանի: 49.Սվիֆթ: 50.Կռնատ: 51.Աշնա: 56.Աղա: 60.Ռա:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445